368

ՀՈՒՇԱԹԵՐԹ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ ՍՏՈՒԳՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԻ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՍՀ ՊԵՏԱՊԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ 1936

Թարգմանեց ռուսերենից Լ. ՄԻՐԶԱ-ԱՎԱԳՅԱՆ
Գառ. խմբագիր Մ. ՍԱՐԳՍՅԱՆ
Տեխ. մեկ. յեվ սրբ. Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ

Գրաքննության գլխ. № 449.
Գաղափար № 856/512
Տիրաժ 2000

ԹԵԿՆԱՄ-ՀՐԱՏ. ԲՅՈՒՐՈ

Գյուղիքաղի ապարան, Յերևան, Նալբանդյան № 11.

368
Հ
Գրանցված է 1941 թ.

ՀՈՒՇԱԹԵՐԹ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄԸՆ ՍՏՈՒԳՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԻՐ ՀԱՄԱՐ

«Գյուղատնտեսական գույքի, անասունների և ցանքերի պետական պարտադիր ապահովագրությունը, պահպանելով կոլտնտեսությունների և մենատնտեսների վաղվա կոլտնտեսականների գույքը հրդեհների, անկման և տարերային աղետների հետևանքներից մի հզոր զենք է հանդիսանում կոլտնտեսային արտադրության ավարտման և հանրային սեփականության պաշտպանության գործում»։

(Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի 1933 թ. մարտի 8-ի վորոշումից)։

1. ՍՏՈՒԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի 1933 թ. մարտի 8-ի գյուղի ապահովագրական աշխատանքի խեղաթյուրումների վերաբերյալ վորոշումը նշել է, վոր դասա-

Գրանցման № 2

կարգային թշնամին, ոգտվելով այն հանգամանքից, որ ֆլատների մասին ակտեր կազմելու ժամանակ հսկողություն չի յեղել և ապահովագրական աշխատողները դասակարգային զգոնություն չեն ունեցել, ոգտագործել և պետական ապահովագրությունը պետության խաբելու համար, ծածկելով ապահովագրական ակտերով առևտրականության և ուղղակի ֆլատության հետևանքները։

Կենտրոնական Կոմիտեի յուցումների համաձայն արգելվում է ապահովագրական վարձատրություն վճարել այն ֆլատների համար, որոնք առաջ են յեկել ոչ թե տարերային աղետներից, այլ անտնտեսվարության, անխնա շահագործման կամ դեպի ապահովագրված դուրքը ֆլատաբար վերաբերմունք ունենալու հետևանքով։ Այն անձինք, որոնք հանցավոր են դրսևորում և փորձեր են անում խորհրդային պետությանը խաբելու համար, պետք է քրեական պատասխանատվության յենթարկվեն։

Ապահովագրական վարձատրություն վճարելու ճշտության ստուգման հիմնական խնդիրն է՝ պարզել թե ինչպես են իրականացրածում գործնականում պետական ապահովագրության որգանները և գյուղական ու ընդհանրային ապահովագրական հանձնաժողովները կուլակության Կենտրոնական Կոմիտեի 1933 թ. մարտի 8-ի պետապահովագրության վերաբերյալ որոշումը, ինչպես նաև հայտաբերել ու վերացնել ապահովագրական ֆլատների լուծարքման գործում յեղած թերությունները։

Այդ կապակցությամբ գյուղական ատուգող բրիգադների վրա դրվում են հետևյալ պարտականությունները։

ԱՌԱՋԻՆԸ, հայտաբերել ապորինի կերպով ապանովագրական վարձատրություն վճարելու փաստերը, այսինքն, այնպիսի դեպքեր, երբ գույքը (ատաղձները, ցանքերը, շենքերը և այլն) փչացել և քացահայտ անտնտեսվարության պատճառով, ինչպես նաև ֆերմաներ հատուցել ապորինի կերպով ժերծելու փաստեր։ Բանը նրանումն է, որ առանձին շրջաններում ապահովագրական հանձնաժողովները և ապահովագրական տեսչությունները սխալ են հասկանում ապահովագրական կանոնները և հրաժարվում են ապահովագրական վարձատրություն տալ անգամ այն ժամանակ, երբ ապահովագրվողն անշուշտ այդ իրավունքն ունի։

Ատուգող բրիգադները, պարզելով նման խեղաթյուրումների բոլոր դեպքերը, պետք է շտապ կերպով վերացնեն դրանք։

ՅԵՐԿՐ ՐԴ ԽՆԴԻՐՆ Է՝ վերջ տալ բաշխողական տարեդարձային աղեստերից տուժած տնտեսություններին ապահովագրական վարձատրություն վճարելու գործում։

Հաճախ գյուղխորհուրդները ամիսներով պահում են իրենց մոտ այն ապահովագրական ակտերը, որոնց հիման վրա ֆերմաների վճարում պետք է կատարվի։ Հաճախ պատահում է, որ ապահովագրական ակտերը երբեմն ժամանակ մնում են ապահովագրական տեսչու-

թյան մոտ և չեն քննվում շրջանային ապահովագրական հանձնաժողովի կողմից։ Յերբեմն ապահովագրական որգանները չինովնիկական, ֆորմալ մոտեցումն են ունենում աշխատավորների բողոքների քննության, որ տրված են ընտանիքի սխալ վճարման կամ չվճարման առթիվ։

ՅԵՐՐՈՐԴ ԽՆԴԻՐԸ ապահովագրված գույքի փչացման կամ վոչնչացման թագցնելու դեմ պայքարելն է։ Առանձին կոլտնտեսություններ, կոլտնտեսականներ և մենատնտեսներ չեն հայտնում ապահովագրված գույքի կորստի մասին։ Յերբեմն դա հետևանք է լինում այն բանի, որ ապահովագրվողները տեղյակ չեն լինում ապահովագրության վերաբերվող որենքներին, իսկ շատ դեպքերում էլ բացատրվում է նրանով, որ աշխատում են խուսափել պատասխանատվությունից դեպի ապահովագրված գույքն իրենց ցույց տված անտնտեսավար վերաբերմունքի համար։

ՉՈՐՐՈՐԴ ԽՆԴԻՐԸ գյուղական ապահովագրական ճանձնաժողովների աշխատանքը բարելավելն է։ Դեռևս նրանցից շատերը անփույթ են վերաբերվում դեպի իրենց պարտականությունները, ի բացակայս յեն կազմում ակտերը կամ բոլորովին չեն կազմում, չեն հայտնաբերում ապահովագրված գույքի փչացման կամ վոչնչացման իսկական պատճառները։ Լինում են նաև դեպքեր, յերբ ապահովագրական ակտերը, հակառակ որենքի, կազմում են

գուղխարհուրդների քարուզարանները կամ իրենք կոլտնտեսությունները։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՆԴԻՐՆ Է ստուգել ապահովագրված գույքի վիճակը կոլտնտեսություններում նրա պատշաճությունն ու շահագործումը բարելավելու նպատակով։

Բացի այդ խնդիրներից ջլատների վճարման ստուգումը պետք է նպաստի կոլտնտեսային հասարակական ակտիվի ներգրավմանն ապահովագրական աշխատանքի մեջ, պետական ապահովագրության մասսայականացմանն ու ապահովագրության կամավոր տեսակների զարգացմանը։

2. ՍՏՈՒԳՈՂ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Գյուղական ստուգող բրիգադները պետք է բաղկացած լինեն 3—5 հոգուց։ Դրանց մեջ մտցվում են՝ բրիգադավարը—շրջգործկոմի լիազորը, գյուղխորհրդի ֆինանսական սեկցիայի ներկայացուցիչը, գյուղական ապահովագրական հանձնաժողովի ներկայացուցիչը և հասարակական կազմակերպությունների՝ կոմյերիտմիության, պրոֆմիության, ապահովագրական ակտիվի և այլ ներկայացուցիչներ։

Շատ կարևոր է ջլատների վճարման ստուգման աշխատանքների մեջ անհատապրուժական աշխատողների և գյուղատնտեսների, ինչպես նաև վարակի վրա հակող տեսուչների ներգրավելը։ Ապահովագրական

արձատրության վճարումը կոլտնտեսություններում ստուգելիս պետք է ներկա լինի կոլտնտեսության վարչության ներկայացուցիչը։

Գյուղական ստուգող բրիգադների աշխատանքի ղեկավարությունը դրվում է շրջանային ապահովագրական հանձնաժողովների վրա։

3. ՍՏՈՒԳՈՂ ԲՐԻԳԱԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ

Ստուգման յենթակա յին 1936 թ. հունվարի 1-ից հետո կազմված ակտերը՝ թե վճարված և թե այն ակտերը, վորոնցով վնասներ հատուցելը մերժված է։ Ստուգող բրիգադի ղեկավարը ստանում է ապահովագրական տեսչից ստուգվելիք ապահովագրական ակտերի ցուցակը։ Ցուցակն ստանալիս բրիգադավարը պետք է համեմատի այն ակտերի ռեեստրում յեղած նշումների հետ և համոզվի, վոր ցուցակի մեջ մտցված են բոլոր ակտերը։ Այնուհետև բրիգադավարը շրջանային ապահովագրական հանձնաժողովի արձանագրություններով պետք է մանրամասն ծանոթանա ապահովագրական վարձատրություն վճարելը մերժելու պատճառներին։

Գյուղխորհրդում բրիգադավարը կազմում է բրիգադ և ղեկուցում կոլտնտեսականների ընդհանուր ժողովում ստուգման նպատակների և խնդիրների մասին։ Մինչ աշխատանքների սկսելը բրիգադը պետք է նայի տվյալ գյուղխորհրդի ակտերը և շրջանային

ապահովագրական հանձնաժողովի վորոշումներն այդ առթիվ։

Ապահովագրված գույքի կորստի կամ ջնջման իսկական պատճառները վորոշելու համար բրիգադը զբաղվում է տարբերային ազետներից տուժած տնտեսությունները և հարցաքննում ապահովագրվածներին, վկաներին, անասնաբուժական և հրշեջ աշխատողներին, ապահովագրական ակտիվիստներին, կոլտնտեսությունների նախագահներին և այլ անձանց։

Բրիգադի խնդիրն է պարզել թե ինչից է փչացել գույքը՝ անտնտեսվարությունից, պաշտպանության բացակայությունից, կոպիտ անզգուշությունից, թե տարբերային ազետից, վորը չեր կարելի կանխել։ Գյուղատնտեսական անասունների անկման վերաբերյալ ակտերը կոլտնտեսություններում ստուգելիս կարելի է քննել անասունի անկման պատճառներն այն բրիգադի կոլտնտեսականների հետ, վորի մոտ անասունի անկումն է տեղի ունեցել։ Միաժամանակ, պետք է մանրամասն ուսումնասիրել անասունների պահպանման, խնամքի և կերակրման պայմանները նույն կոլտնտեսության մեջ։

Եթե յեթե կպարզվի, վոր չպետք է մերժվեր ջնջանքը հատուցելը և վոր ապահովագրվողը վարձատրություն ստանալու որինական իրավունք ունի, ապա բրիգադը տալիս է իր մանրամասն յեզրակացությունը վարձատրություն տալու անհրաժեշտության մասին։ Այն ակտերի վրա, վորոնցով ճիշտ է մերժված

վարձատրություն վճարելը, բրիգադը նշում և այդ յեզրակացությանը համաձայն լինելու մասին։

Ստուգելով այն ակտերը, որոնցով մերժված են ճյուանների վճարելը, բրիգադն անցնում և այն ակտերի ստուգմանը, որոնցով ապահովագրական վարձատրություն տրված է։ Դրա նպատակն է՝ հայտաբերել ապորինի կերպով ապահովագրական վարձատրություն վճարելու փաստերը, որինակ, յերբ գույքը փչացել և բացահայտ անտնտեսավարության և դեպի ապահովագրված գույքը ճյասարար վերաբերմունք ունենալու հետևանքով։ Այդ ակտերն ստուգելուց հետո բրիգադը կամ հաստատում և ճյասների վճարման ճշտությունը, կամ վերջում և, որ վճարումը յեղել է սխալ և գույքը փչացել է անտնտեսավարությունից։ Այդ ստուգելու համար բրիգադը պետք է մեջ բերի իր նկատած փաստերը և ցույց տա գույքի կորստի կոնկրետ հանգամանքներին։ Բրիգադի յեզրակացությունը հիշատակվում է ստուգման ակտի մեջ։

Միաժամանակ բրիգադը պարզում է, թե արդյոք ապահովանում է գյուղական ապահովագրական հանձնաժողովը (կամ շրջանային ապահովագրական հանձնաժողովի ներկայացուցիչները) ակտեր կազմելու համար որենքով սահմանված ժամկետները։ Բրիգադը յուրաքանչյուր ակտով պարզում է, թե յերբ է հայտնել ապահովագրվողը ճյասի մասին և յերբ է գյուղական հանձնաժողովը ակտ կազմել, ժամանակին է արդյոք գյուղական հանձնաժողովը ակտերն ուղարկել շրջանային ապահովագրական հանձնաժողովին։ Ժամկետ-

ների խախտման, քաշքշուկի բոլոր հայտաբերված դեպքերի մասին պետք է նշել ակտի մեջ, ցույց տալով կոնկրետ հանցավորներին։

Այնուհետև բրիգադը պարզում է անասունների անկման, հրդեհների, ցանքերի փչացման այն բոլոր դեպքերը, որոնց առթիվ ապահովագրական ակտեր կազմված չեն լինել։ Այս նպատակով բրիգադը ոգտվում է գյուղխորհրդի տված տեղեկություններից, կոլտնտեսությունների հաշվառման մատյաններից, հաքցաքննում է կոլտնտեսականներին և այլն։ Հատուկ ձևի բլանկի վրա բրիգադը կազմում է անասունների անկման, հրդեհների և ցանքերի փչացման այն դեպքերի ցուցակը, որոնց առթիվ ապահովագրական ակտեր կազմված չեն լինել, ցույց տալով թե ինչու այդ մասին հայտնված չի լինել և ով է մեղավորը։ Ակտերի մեջ պետք է նշված լինի, թե այդ տեղի ունեցել այն պատճառով, որ ապահովագրվողները տեղյակ չեն լինել ապահովագրության վերաբերյալ որոնքին, թե կոլտնտեսության վարչության, գյուղական ապահովագրական հանձնաժողովի անփութության կամ, վերջապես, ապահովագրված գույքի փչացումը դիտավորյալ կերպով թաքցնելու հետևանքով։ Բրիգադը պետք է նկատի ունենա, որ ակտեր չկազմելու դեպքերի մեծագույն մասն ընկնում է մատղաշ գյուղատնտեսական անասունների անկման և մանր անասունների (վոչխարների, խոզերի, այծերի) անկման դեպքերին։

4. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԿՏԵՐ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հրդեհից առաջացած վնասները ստուգելիս նախ և առաջ պետք է մանրազննիս պարզել հրդեհի պատճառները և այն, թե արդյոք վնասները չեն վճարվել այլ ապիսի գույքի համար, վորը չի ապահովագրվում (անձարդարնակ և չպաշտպանվող շենքեր և այլն), ինչպես նաև վճարման դեպքեր, գույքի իսկական արժեքը գերազանցող գումարներով։

Հաճախ ակտի «հրդեհի պատճառները» այնպես գրում են «անհայտ են»։ Բրիգադը պետք է վկաների հարցաքննության միջոցով պարզի հրդեհի պատճառները։ Եթե հրդեհի վերաբերյալ գործը քննչական որգանների ձեռք է գտնվում, ապա անհրաժեշտ է կապվել նրանց հետ։ Եթե քննությունն արդյունք չի տվել և հրդեհի պատճառները չեն պարզվել, ապա վնասները անմիջապես պետք է վճարել։

Հաճախ հրդեհների վերաբերյալ ակտերում նշում են, թե հրդեհի պատճառը յեղել և «յերբեխաների չարաճճիությունը»։ Փորձը ցույց է տալիս, վոր յերբեմն «յերեխաների չարաճճիության» հետևը դատակարգային թշնամին և ծածկված լինում։ Ուստի, նման դեպքերն ստուգելիս պետք է հատկապես մանրազննին պարզել գործի բոլոր հանգամանքները։

Եթե ցույց է տրվում, վոր հրդեհը տեղի յե ունեցել «վառարանների անկանոն լինելուց», «կրակի հետանզգույշ վարվելուց», ապա նույնպես պետք է հետա-

զուտել թե ինչումն է այդ արտահայտվել, թե արդյոք նեբկա դեպքում հասարակ անզգուշություն է յեղել, դժբախտ պատահար, թե հրդեհն առաջ է յեկել բացահայտ անտնտեսվարության հետևանքով։

Մի շարք շրջանային ապահովագրական հանձնաժողովներ հրդեհային վնասները չեն վճարում, հիմնվելով այն բանի վրա, որ վառարաններն անկանոն են կամ կրակի հետ պատահաբար անզգույշ են վարվել։ Դա վոչ բոլոր դեպքերում է ճիշտ, քանի որ վառարանների անկանոն լինելը կարող է և գուցեաները չնկատել։ Այլ բան է, յերբ սիստեմատիկաբար չարամտորեն խախտում են հակահրդեհային պաշտպանության կանոնները կամ կոպիտ անզգուշություն է թույլ տրվում։ Նման դեպքերում վնասները չպետք է վճարել։

Յեթե վնասը կոլտնտեսության մեջ տեղի յե ունեցել առանձին կոլտնտեսականի մեղքով և վոչ ընդհանուր անտնտեսվարության արտահայտություն է յեղել, այսինքն, յեթե կոլտնտեսության մեջ հակազդություն է սահմանված աշխատանքային կարգապահության վրա և լավ է դրված հանրային սեփականության պաշտպանության գործը, ապա վնասները պետք է վճարել։ Նույնը վերաբերում է և գյուղատնտեսական անասունների անկման դեպքերին։

5. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԱՆՕՄՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԿՏԵՐ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ստուգող բրիգադը նախ և առաջ պետք է պարզի, թե արդյոք ապահովագրված անասունն անկումն անտանտեսվարությունից չի տեղի ունեցել։ Ուստի բրիգադը պետք է լավ գիտենա, թե ինչ է հասկացվում «բացահայտ անտանտեսվարություն» ասելով։

Բրիգադը կհանդիպի այնպիսի դեպքերի, յերբ ձիյերը սատկում են ծակոցներից, իսկ խոշոր յեղջուրավոր անասունները փորոտիքը խիստ ուռչելուց։ Այդ հիվանդությունները, մեծ մասամբ, անասուններին անկանոն կերակրելու, նրանց վատորակ կամ վատ նախապատրաստված կեր տալու հետևանք են լինում։ Եթե նույն անտեսության մեջ անասունների ծակոցների ու փորոտիքը խիստ ուռչելու կրկնակի դեպքեր են լինում, ապա այդ ցույց է տալիս, որ անասունատերն անտանտեսվոր է։

Սակայն, լինում են դեպքեր, յերբ այդ հիվանդությունները պատահում են անասնատիրոջ կամքից անկախ։ Որինակ, ձին կարող է ծակոցներով հիվանդանալ կերը լավ չծամելու, վատ ատամներ ունենալու կամ արագ ու ագահաբար ուտելու դեպքում։ Խոշոր յեղջուրավոր անասուն փորոտիքը կարող է ուռչել դժբախտ պատահականությունից, որինակ, անասունը կարող է անձրևի տակ մնալ ու թրջվել և թաց կեր ուտել։ Նման դեպքերում ապահովագրական վարձատրություն պետք է վճարել։

Անասունների անկումն մրսելուց (թոքերի բորբոքում և այլն) հաճախ նույնպես անտնտեսվարության հետևանք և լինում (անասուններին ցուրտ շենքերում պահելը, շատ սառը ջուր տալը և այլն)։ Սակայն, վոչ ամեն ժամանակ կարելի յե կանխել ցրտահարությունը, որինակ, յեթե ցուրտ ժամանակ ճանապարհ գնալիս հարկադրված կանգնեցնում են տաքացած ձիուն բաց տեղում։

Նույնը պետք է ասել և անասունների անկման մասին զանազան տեսակի դժբախտ պատահարներից։ Անասունները, գիշատիչ գազանների զոհ են դառնում, խեղդվում են, գնացքի տակ են ընկնում գլխավորապես պաշտպանության բացակայության պատճառով։ Վերքերը, տրորվածքները, կոտրվածքները նույնպես հաճախ անասունների հսկողության բացակայության և անկանոն լծելու հետևանք են լինում։ Որինակ, անասունը կարող է խեղդվել լողանալու ժամանակ, ընկնելով փոսի մեջ. թեև հսկողություն նրա վրա յեղել է։ Նա կարող է հեռանալ հոտից և վայրենի գազանի զոհ դառնալ, չնայած վոր նրան պաշտպանում են հովիվները ու պահապան շները։ Աշխատանքի ժամանակ ձին կարող է ճնշվել կամ վիրավորվել, չնայած, վոր հսկողություն կա։

Անասունները կարող են հյուծվել կամ այն պատճառով, վոր անտեսություն կեր չի մթերել կամ այն փչացել է վատ պահելուց։ Բայց կարող են պատահել նաև դեպքեր, յերբ անտեսությունը կեր չի ունենում անբերքության հետևանքով։ Այս դեպքում անասուն-

ների հյուծվելը չի կարելի անտնտեսավարության վերագրել։ Բացի այդ, անասունները կարող են հյուծվել այնպիսի ծանր հիվանդությունից, որը կանխել չեք կարելի, ծերության պատճառով և այլն։

Բոլոր անասունները կարող են սատկել վատ պահպանման, բուժման համար միջոցներ ձեռք չառնելու հետևանքով։ Բոլոր սատկած անասունների համար ապահովագրական վարձատրություն տալը չի թույլատրվում։

Անասնաբուժական անձնակազմի յեղրակացությունն այն մասին, որ անասունը սատկել է «ծերությունից» առանց նշելու դրա անմիջական պատճառները, չի կարող հիմք ծառայել ինչպես ջնջանները հատուցելու, նույնպես և դրամ վճարելը մերժելու համար։ Բրիգադը պետք է նկատի ունենա, որ վատ պահպանելն ու կերակրելը, ինչպես նաև ուժից վերը աշխատեցնելն առանձնապես անդրադառնում են հենց ծեր անասունների վրա։

Մի խոսքով, ստուգող բրիգադը բոլոր դեպքերում ապահովագրական վարձատրություն վճարելու կամ չվճարելու հարցը պետք է լուծի նայած այն բանին թե արդյոք անասունը սատկել է անխափանելի պատահականության պատճառով, թե անտնտեսավարության հետևանքով։ Կոլտնտեսությունների ջնջանների վճարման ճշտության հարցը քննելիս անհրաժեշտ է համոզվել, որ կոլտնտեսության գեկավար կազմը վոչ անմիջական, վոչ էլ անուղղակի կերպով մեղավոր չէ գույքի կորստի մեջ։ Բայց, եթե գույքը փչացել է

ռեանձին կոլտնտեսականների անտնտեսվարության հետևանքով, չնայած, որ կոլտնտեսության վարչությունը միջոցներ ձեռք առել է ապահովագրված գույքը պաշտպանելու համար, ապա ջնջանները պետք է հատուցել։

Այս պարզաբանելու համար բերեմ քանի մի օրինակ,—

1-ին օրինակ. կոլտնտեսային բրիգադներից մեկում ձին սատկել է ծակոցներից։ Պարզվել է, որ նրա մահվան անմիջական պատճառը կոլտնտեսական խոտապանն և հանդիսանում, որը գերակերակրել է ձիուն և որ ձիերի անկման դեպքերը ծակոցներից (պատճառը՝ անկանոն կերակրում) տվյալ բրիգադում մինչ այդ էլ նկատվել են։ Բրիգադավարն ու կոլտնտեսության վարչությունը միջոցներ ձեռք չեն առել ձիերի կանոնավոր կերակրումը կազմակերպելու, խոտապանների անձնական կազմն ստուգելու համար։ Ուստի, ապահովագրական վարձատրությունն չպետք է վճարել։

2-րդ օրինակ. կոլտնտեսային բրիգադներից մեկում սատկել է 2 ձի թոքերի ուռուցքից։ Պարզվել է որ կոլտնտեսական խոտապանը հարբած դրության մեջ ձիերին խոտ քշել և ուժասպառ է արել։ Ձիերի շահագործումը բրիգադում ճիշտ է կազմակերպված, խոտապանները ստուգված են, այն խոտապանը, որը ձիերին խոտ քշել է, նկատված չի եղել դեպի հանրային սեփականությունն անտնտեսվար վերաբերո-

մուն ը ունենալու մեջ։ Այս դեպքում ապահովագրական վարձատրությունն կոլտնտեսությանը պետք է վճարել։

6. ՅՈՒՅՈՒՄՆԵՐ ՅԱՆՔԵՐԻ ՓՉԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԿՏԵՐ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ստուգում անցկացնելու ժամանակը (ձմեռ) թույլ չի տալիս վարելու ցանքերի փչացման և աճման բոլոր հանգամանքները։

Սակայն բրիգադը կարող է և պետք է պարզի հետևյալ տվյալները.—

1) Ժամանակին, են արդյոք դյուղխորհուրդները հանձնել շրջապտեսչությանը հայտը ցանքերի փչացման կամ ճնաման մասին։

2) Ժամանակին են արդյոք լուծարվել ճնատները այն դեպքերում, երբ անհրաժեշտ է եղել կրկնացանել փչացած մշակությունը։

3) Արդյոք ցանքերի նախնական զննության ակտերը միշտ հետագայում ստուգվել են։

4) Չեն եղել արդյոք դեպքեր, երբ վճարվել է այնպիսի տարածության համար, որը փաստորեն կրկնացանված չի եղել։

5) Իրոք ցանքերի փչացումը տեղի չի ունեցել տարերային աղետներից, թե ոչ ապահովագրական պատճառներից և անտնտեսվարությունից, որինակ, ուշ ցանքից, սերմացուն անկանոն ծածկելուց, անպետք հողամասերում ցանք կատարելուց և այլն։

6) Ստուգվել է արդյոք փչացած ցանքերի տա-

բաժանությունը միատեսակ լուծարելու ժամանակ, տեղուժ չափելու միջոցով կամ կոլտնտեսության տնտեսական ու հողային պլաններով։

Վերջապես ստուգված լինի թե ինչպես են կատարել կոլտնտեսությունները ագրոկանոնները պետք և ոգտագործել կոլտնտեսությունների փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկություններ ստանալ ՄՏԿ և զրջհողբաժիններից։ Կոլտնտեսության փաստաթղթերը կազմող են լինել հետևյալները.—

ա) աշխատանքի նորմայները, վորոնց հիման վրա կարելի յե վորոշել ցանքի ժամանակը։

բ) հանձնաժողովների ակտերն աշխատանքի ընդունելու մասին վորոնց հիման վրա կարելի յե դատել հողի նախացանքային մշակման, սերմացուն կանոնավոր ծածկելու մասին և այլն։

գ) Վորակի վրա հսկող տեսուչների ակտերը, վորոնց մեջ նշված և մշակման թերություններն առանձին հողամասերում։

դ) Շրջանային գյուղատնտեսների ակտերը։

ե) Հնգորյա ամփոփումներ ցանքի ընթացքի մասին։

Բացի այդ, անհրաժեշտ և հարցաքննել կոլտնտեսականներին, դաշտագործ-բրիգադավարներից, վորակի վրա հսկող տեսուչներին և այլն։

Հաճախ ֆետները չեն հատուցում փչացած մշակույթը չկրկնացնելու համար։ Մինչդեռ, յերբեմն ապահովագրվողը կրկնացանք չի կատարում ցանքաշրջանառության չխախտելու համար։ Այդ դեպքում

ՀԱՍՊ ԳՐԱԴԱՐԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
Գ-64-4 309
Գ-3344

պետք է վճարել ջնջանները։ Չի կարելի նաև առանձին ապրոկանոններ չկատարելու համար ապահովագրական վարձատրությունն չվճարել այն դեպքերում, երբ այդ ջնջաներ առաջ չի բերել և չի ավելացրել դրանց չափը։ Որինակ, չի կարելի կարկտահարումից առաջացած ջնջանները չհատուցել այն պատճառով, որ ցանքը կատարվել է վոչ շարքացանով։

7. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԿՅՈՆԴԻ ՍՊՈՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐՆ ՄՏՈՒԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Անձնական ապահովագրության ջնջանների վճարման ստուգումը նույն նպատակն ունի, ինչ որ գույքային ապահովագրության ստուգումը, այսինքն, ապորինի վճարումներ, սխալ մերժումներ, քաշքշուկներ հայտնաբերելը և այլն։

Բրիգադի ղեկավարը պետք է ապահովագրական տեսչության ստուգի անձնական ապահովագրության ջնջանների ռեեստրը և պարզի, թե արդյոք բոլոր ջնջանները և տեսուչը մտցրել ցուցակի մեջ։ Միաժամանակ, բրիգադը պետք է նույն տեղում ստուգի բոլոր այն փաստաթղթերն ու տեղեկանքները, որոնց հիման վրա ապահովագրական դպաստ է տրվել։ Գալով այն կոլեկտիվը, որտեղ ապահովագրվողն է աշխատելը, բրիգադն ստուգում է, թե արդյոք ճիշտ տեղեկանքներ և ավել ոժանդակող հանձնաժողովն ապահովագրվածների մասին։ Բանը նրանումն է, որ պատահել են դեպքեր, երբ սխալ և նույնիսկ կեղծ տեղեկանքներ

են տրվել այնպիսի անձանց ապահովագրության մասին, որոնք իրականում ապահովագրված չեն եղել իսկ յուրաքանչյուր տեղեկանքներում նշվել և ապահովագրական վճարումներ կատարելու մասին, ինչ որ իրականում չի եղել։

Տեղեկանքներում մատնանշված ազգանուններն ստուգվում են կամ տվյալ կոլեկտիվում ապահովագրվածների անվանական ցուցակով, կամ հայտարարություններով (եթե ապահովագրությունը կատարվել և վոչ ցուցակներով)։

Անհրաժեշտ է նաև ստուգել, թե արդյոք անձամբ են ստորագրել ապահովագրական անվանական ցուցակներում կամ հայտարարություններում և արդյոք ցույց են տրված այն անձինք, որոնց ժառանգություն և թողնված ապահովագրական նպաստը։

Ապահովագրական մուծանքների վճարումը կատարելի է ստուգել դրամական վաճառների անվանական վճարման ցուցակներով, ընդվորում, պետք է ստուգել թե արդյոք ստորագրել են ապահովագրական վճարումներ կատարողները և ցույց է տրված արդյոք յուրաքանչյուր վճարում ստանալու ժամանակը։

Եթե ստուգումը պարզում է, որ ուժանդակող հանձնաժողովը սխալ կամ ապօրինի տեղեկանք է տվել ապահովագրվածի մասին, ապա ստուգող բրիգադը համապատասխան ակտ է կազմում այդ մասին, որը կցվում է ստուգման ընդհանուր ակտին։

Վնասների վճարման ճշտությունն ստուգելու հետ միասին բրիգադը պետք է ուշադրություն ծա-

նոթանա, թե ընդհանրապես ինչպես և որված կյանքի ապահովագրության գործը յուրաքանչյուր կոլեկտիվում։

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ապահովագրվածներ ընդգրկելու, դրամահավաքների աշխատանքի վրա կի, գանձված վճարումների հաշվառման կարգի և Պետական օրգաններին ժամանակին փոխանցելու վրա։ Անհրաժեշտ է ստուգել, թե արդյոք տրված են վկայականներ ապահովագրվածներին, և նշվում է արդյոք նրանց մեջ ապահովագրական վճարումները կատարելու մասին։

Այն դեպքերում, երբ բրիգադն անհրաժեշտ է համարում այցելելու ապահովագրվածի ընտանիքը կամ այն անձին, որն ապահովագրական նպաստ է ստացել և հարցաքննելու նրանց, ապա այդ պետք է անել

8. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վնասների վճարման ճշտությունն ստուգելիս, մանավանդ այն կոլտնտեսություններում, որտեղ հաճախ հրդեհի և անասունների անկման դեպքեր են նկատվել, ստուգող բրիգադը գույքի կորստի պատճառները պարզելու համար պետք է այդ կոլտնտեսություններում ապահովագրված գույքի դրության ստուգատես կատարի։

Առաջին հերթին պետք է կոլտնտեսության մեջ ստուգել, թե ինչ դրության մեջ է անասունների

պահպանման և խնամքի գործը։ Բրիգադը նայում է ախոռները, անասնաբակները, խոզարանները և այլն, ստուգում է, թե արդյոք ապահովված են անասունները կերով, ճիշտ են արդյոք շահագործվում, պահպանվում են արդյոք կոլտնտեսության մեջ անասնաբուժական-սանիտարական հսկողության կանոնները (հիվանդ անասունների առանձնացում, նրանց խնամքի կազմակերպում, ախտահանում և այլն)։

Հանձնարարելին պաշտպանությունն ստուգելիս անհրաժեշտ է պարզել, թե արդյոք սարքին է հրշեջ ինվենտարը, սահմանված է արդյոք պահապանների հերթապահություն, կատարվում է արդյոք ծխանցքների, ծխնելույզների վերանորոգում, մաքրում և այլն։

Ստուգող բրիգադը պետք է նկատի ունենա, որ ապահովագրված գույքի դրության ստուգատեսը կոլտնտեսություններում թույլ կտա հայտաբերելու հանրային սեփականության պաշտպանության գործում յեղած թերությունները և կանխելու գյուղատնտեսական անասունների, շենքերի և այլ արժեքների կորուստը։

Ապահովագրված գույքի պահպանման և պաշտպանության գործում նկատված բոլոր թերությունները բրիգադն արձանագրում է հատուկ ակտերում, որի մեկ օրինակը թողնում է կոլտնտեսությունում, իսկ մյուս օրինակը՝ հանձնվում է շրջանային ապահովագրական տեսչությանը։ Եթե հայտաբերվում են դեպի գույքը ըստ՝ հայտ անտնտեսավար վերաբերմունք ունենալու փաստեր, ապա բրիգադի ղեկավարն ան-

միջոցներ հայտնում և այդ մասին գյուղխորհրդին, շրջհողբաժնին և շրջանային ապահովագրական տեսչությանն անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար։

9. ԲՐԻԳԱԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Իր աշխատանքն ավարտելուց հետո բրիգադը կազմում և ապահովագրական ֆնյանների ստուգման ակտ (հատուկ ձևի բլանկի վրա)։ Ակտի մեջ բրիգադը գրում է տալիս, թե ինչ պատճառով և փչացել կամ ֆնյակել գույքը, տալիս և իր յեզրակացությունը ֆնյանները վճարելու կամ չվճարելու ճշտության մասին, նշում և, թե ով և մեղավոր դրամը սխալ վճարելու կամ ապորինի կերպով չվճարելու, ինչպես նաև քաշքշուկի մեջ։

Այն բոլոր դեպքերում, յերբ գյուղական ստուգող բրիգադը գտնում և շրջանային ապահովագրական հանձնաժողովի վերջուն ապահովագրական վարձատրության վճարելու կամ չվճարելու մասին սխալ, ապա նա պետք և մանրամասն հիմնավորի իր յեզրակացությունը։

Նույն ակտում ստուգող բրիգադը բոլոր նյութերի հիման վրա յեզրակացություն և տալիս գյուղական ապահովագրական հանձնաժողովի աշխատանքի վերաբերյալ։

Այդ ակտին պետք և կցված լինեն հատուկ ակտեր կոլտնտեսությունների ապահովագրված գույքի դրության մասին, ակտեր ստուգման ժամանակ հայ-

տաբերված, ապահովագրական որգաններին չհայտնը-
ված, ֆլատների մասին, կոլտնտեսականների ընդհա-
նուր ժողովների վարչությունները ստուգող բրիգադների
զեկուցումների առթիվ և այլ նյութեր։

Այս բոլոր փաստաթղթերը բրիգադավարն անհ-
ապաղ պետք է հանձնի շրջանային (քաղաքային)
ապահովագրական տեսչությանը և ստանա հատուկ
ստացական, իսկ յուրաքանչյուր ստուգման ժամանակ պարզված
է, որ ապահովագրական տեսուչը չարաբկությունները
և կատարելը, ապա նյութը հանձնվում է շրջանային
ապահովագրական հանձնաժողովի նախագահին։

Գյուղական ստուգող բրիգադի նյութերը շրջա-
նային ապահովագրական հանձնաժողովի կողմից
քննվելիս բրիգադի զեկուցումն անհրաժեշտ բացատրու-
թյուններ պետք է տա այն բոլոր դեպքերի մասին,
երբ բրիգադը համաձայն չի լինի շրջանային ապահո-
վագրական հանձնաժողովի սկզբնական վարոշմանը,
ինչպես նաև ստուգման ժամանակ հայտաբերված
քաղքշուկի, գյուղական ապահովագրական հանձնաժո-
ղովների վատ աշխատանքի և Պետապի որգաններից
ֆլատներ թագցնելու բոլոր փաստերի մասին։

10. ՍՏՈՒԳՈՂ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՅԵՎ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարիատի 1936 թ. հոկտեմբերի 9-ի հրամանով հատկացված է 300.000 ռ. այն լավագույն ակտիվիստներին պարգևատրելու համար, վորոնք

ատուգման աշխատանքի բարձր նմուշներ են ցուցադրվել։ Պարգևատրումը կատարելու յեն Պետական հանրապետական վարչությունը շրջանային ապահովագրական հանձնաժողովների առաջադրությամբ։

Պետական գլխավոր վարչությունը նույնպես պարգևատրելու յե լավագույն ատուգող բրիգադներին ու ակտիվիստներին։ Այդ նպատակով սահմանված է հետևյալ պարգևները՝

10	պարգև	ատուգող բրիգադների համար	500-ական	ռ.
15	»	» » »	300 ական	»
10	»	ակտիվիստներին »	300-ական	»
20	»	» »	200-ական	»
50	»	» »	100-ական	»

ՔԱՂՎԱԾՔ

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՑ

(Հաստատված ԽՍՀՄ ԺԿԽ կողմից 20-ին մայիսի 1933 թ.)

ՎՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ Ե ՊԵՏԱՊԸ ՀԱՏՈՒՑԱՆՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

§ 6. Պետապը հատուցանում և ապահովագրված գույքի վնասները միայն այն դեպքում, յեթե այդ գույքի կորուստը հետևանք է տարերային աղետների և դժբախտ դեպքերի, վորոնք անկախ են գույքատիրոջ կամքից։

§ 7. Շենքերի, արդյունաբերական ձեռնարկների, ինվենտարի, տրանսպորտի միջոցների և կոլտնտեսությունների ցյուս գույքի ապահովագրության համար (գյուղատնտեսական կոմունաների, գյուղատնտեսական արտելների և տոզերի) Պետապը հատուցանում է հրդեհից կայծակահարումից և շոգեկաթսաների պայթումից (թեկուզ կայծակի հարվածը կամ

պայթումը հրդեհ չեն առաջացնում). հեղեղումից յերկրաշարժից, փոթորկից, մրրկից, տարափից, փլզումներից և սողումներից առաջացած վնասները։

§ 8. Կոլտնտեսականների շենքերի ապահովագրության համար Պետապը հատուցանում է հրդեհից, կայծակահարությունից (թեկուզ կայծակի հարվածը հրդեհ չի առաջացնում) հեղեղումից, յերկրաշարժից, փլզումներից և սողումներից առաջացած վնասները։

§ 9. Մենատնտես տնտեսություններին պատկանող շենքերի և տնայնագործական արհեստանոցների (սարքավորման հետ միասին) Պետապը վճարում է հրդեհից, կայծակահարումից (թեկուզ կայծակի հարվածը հրդեհ չի առաջացրել) առաջացած վնասները։

§ 10. Պետապը հատուցանում է նաև տարերային աղետի ժամանակ հրդեհից, հեղեղումից առաջացած շենքերի և ուրիշ գույքի վնասները, յեթե հրդեհը հանգցնելու համար անհրաժեշտ է քանդել շենքը, տանիքը և այլն։

§ 11. Գյուղատնտեսական անասուններն ապահովագրելու համար Պետապը հատուցանում է հիվանդություններից, բնական մահից և դժբախտ դեպքերից (հրդեհից, կայծակահարումից, հեղեղումից և այլն) ընկած անասունների վնասները, ինչպես նաև վարակիչ հիվանդությունները վերացնելու և վերացնելու համար անասնաբուժի կամ անասնաբուժական կարգադրությամբ մորթված անասունների վնասը։

Ծանոթություն.— Յեթե անասունը վոտը կոտրել և կամ ստացել է այլ վնասվածք, վորը

նրան դարձրել է անպետք վորպես բանող ուժ. կամ վոչ արդյունավետ անասուն, մորթվել է մսի համար, այլ և յեթե անասնաբուժի կարգադրությամբ մորթված է վորպես պիտանի աննդի համար, ապահովագրական վարձատրություն չի հատուցվում։

Յեթե կոլտնտեսությունում անասնաբուժի կամ անասնաբուժակի կարգադրությամբ դժբախտ դեպքի հետևանքով մորթվել է ցեղական անասունը, կամ ազնվացրած անասունը, այդ դեպքում Պետապը կոլտնտեսությանը վճարում է տարբերությունը, վորը առաջացել է մսի արժեքի և ապահովագրական վարձատրության միջև, այդ դեպքում մսի արժեքը հաշվվում է կոնվենցիոն գներով, յեթե կոլտնտեսությունն ապացույց, վոր միայը վաճառել է այդ գնով։ Մնացած դեպքերում մսի գինը հաշվվում է կոլտնտեսային շուկայի գներով։

§ 12. Գյուղատնտեսական կուլտուրաների ցանքերի ապահովագրության համար Պետապը վնասները հատուցանում է՝

ա) Կարկտահարությունից, և նույնպես նրան ուղեկցող փոթորկից և տարափից։

բ) Ցրտահարությունից, թրջումից, փտումից և հեղեղումներից։

գ) Ցերաշտից։

Կոլտնտեսությունների գյուղատնտեսական կուլտուրաների ցանքերի ապահովագրության համար Պետությունը բացի այդ, հատուցանում է նաև կրակից առաջացած գյուղատնտեսական կուլտուրաների չհնձված ցանքերի վնասները։

§ 13. Պետությունը հատուցանում է կուլակության դեմ ակտիվորեն պայքարող կոլտնտեսությունների, ինչպես նաև կոլտնտեսականների և մենատնտեսների գույքի կորստից կամ վնասվածքից առաջացած վնասները լիակատար արժեքով, յեթե գույքի կորուստը կամ վնասվածքը տեղի յե ունեցել դասակարգային վրեժխնդրության գործողության հետևանքով։

Դասակարգային վրեժխնդրության փաստը պետք է հաստատվի շրջանային ապահովագրական հանձնաժողովի հատուկ վորոշմամբ, այն բոլոր հանգամանքների ժանրամասն ուսումնասիրության հիման վրա, վորոնք կապված են գույքի կորստի կամ վնասվածքի հետ։

ՎՈՐ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱՊԸ ՉԻ ՀԱՏՈՒՑԱՆՈՒՄ ՎՆԱՍՆԵՐԸ

§ 14. Պետապը չի հատուցանում վնասները այն դեպքերում, յերբ ապահովագրված գույքի կորուստը կամ վնասվածքը տեղի յե ունեցել կոլտնտեսության, կոլտնտեսականի և մենատնտես տնտեսությունների ժեղավորության պատճառով, այսինքն՝

ա) բացարձակ անտնտեսության հետևանքով.

բ) հասարակական սեփականության պաշտպանության բացակայության հետևանքով.

գ) ապահովագրողի չարամիտ գործողությունների հետևանքով։

§ 15. Պետությունը գույքատիրոջ ինքնությունը չի հաստատում ապահովագրված ընկած անասունի համար այն դեպքում, յեթե գույքատերը մեղավոր է անասունի անկման համար, այսինքն, յեթե այդ անկումը առաջացել է նրա սխալ գործողությունների հետևանքով, կամ թե անհրաժեշտ միջոցներ ձեռք չի առել այն ե՝

ա) յեթե անասունի անկման պատճառը յեղել է հիվանդությունը կամ դժբախտ դեպքը վորը տեղի յե ունեցել բացարձակ անտնտեսության հետևանքով (անասունի անբավարար կերակրելը և այդ պատճառով նրան հյուծելը, կեղտոտ կեր տալը, սխալ լծելը, անասունին տեղական պայմաններին վոչ հարմարեցված շենքում պահելը, հիվանդ անասուններին վատ խնամելը, անասունի հիվանդանալու ժամին անասնաբուժին կամ գյուղխորհրդին իր ժամանակին չհայտնելը)։

բ) յեթե անասունի մահը տեղի յե ունեցել նրան անհոգի կերպով շահագործելու, կամ նրա նկատմամբ ցույց տված ինտենսիվ վերաբերմունքի հետևանքով, նրա ուժից բարձր աշխատանքով ծանրաբեռնելու, անասունին ծեծելու, վազացնելու, ինտենսիվ կեր տալու, քրտնած անասունին սառը ջուր խմացնելու և այլն.

Յեթե անասնաբուժը կամ անասնաբուժակը հաս-

տատեն, վոր ընկած անատունը վարակված և վարակիչ հիվանդություններով և անասնաբուժական կանոնների մասին պարտադիր վորոշումները գույքատիրոջ կողմից չպահպանելու հետևանքով։

§ 16. Պետությունը գյուղատնտեսական կուլտուրաների ցանքսերի ճնշումները ցանքատիրոջը չի հատուցանում հետևյալ դեպքերում՝

ա) յեթե ճնշված մշակությունը չի վերացանված, չնայած նրա վերացանման անհրաժեշտության, և ըստ տարվա յեղանակի հնարավոր եր վերացան կատարել։

բ) յեթե անտեսությունը վոչ մի միջոց ձեռք չի առել տուժած տարածության բույսի հետագա մշակման և խնայելու համար, ինչպես սովորաբար մյուս անտեսությունները են կատարում, ճնշման չափը պակասեցնելու նպատակով (բուգլից, քաղհան և այլ աշխատանքներ)։

գ) յեթե տարերային աղետը առաջացել և տարվա այնպես ժամանակում, յերբ տվյալ տեղում և տարվա պայմաններում ապահովագրված կուլտուրայի բերքը պետք և հավաքված լիներ։

դ) յեթե տուժած հողամասում անտեսությունը թույլ տա մինչև բուծարքային ակտի կազմելը անասուններ արածացնելու, խոտ հնձելու, կանաչ կերի կամ սիլոսի համար հավաքելու, կամ թե թույլ տա այլ գործողություններ՝ վորոնք պակասացնում են տարերային աղետից հետո մնացած բերքի արժեքը։

Ծանոթություն.—Յեթե շրջանային հանձնաժողովը ներկա կանոնների ամսամանված ժամանա-

կամիջոցում արձանագրություն չի կազմի։ այն դեպքում սեփականությունն այս մասին հայտնում է գյուղխորհրդին, որից հետո իրավունք ունի վերացանելու կամ տուժած տարածության կուլտուրան հավաքելու, խոտի, կանաչ կերի, կամ սիլոսի համար, և այս դեպքում չի զրկվում ապահովագրական վարձատրություն ստանալու իրավունքից։

17. Պետապը չի հատուցանում հրդեհից վոչնչացված շենքերի, ինվենտարի և այլ գույքի համար, յեթե ջնջաը տեղի յե ունեցել տնտեսության կողմից հակահրդեհային պահպանության կանոնները խախտելու հետևանքով (վառարանների ծխնելուցների վոչ սարքին պահելը, շենքի կամ կալի մոտ խարույկ վառելը, հրավտանգ (огнеопасных) նյութերի հետ անփույթ վարվելու և այլն)։

Ինչպես նաև, յեթե հրդեհն առաջացել է ողեծխումից, կամ կոպիտ անզգուշության հետևանքով։

18. Այն ջնջանները վորոնք տեղի յեն ունեցել գույքի գողացվելու կամ կորչելու հետևանքով, ինչպես նաև արտադրության ընդհատումից, չեն հատուցվում։

19. Բացի այդ, անկախ այն պատճառներից, վորոնցից ապահովագրված գույքերը վոչնչացվել է, Պետապը ջնջանները չի հատուցանում այն դեպքում, յերբ գույքատերը՝

ա) պարտադիր կոպարային ապահովագրության գույքը թագցրել է հաշվառումից։

ը) չի հաղորդել սահմանված ժամկետին ապահովագրված գույքի վնասի մերժելու մասին.

գ) վնց ամսվա ընթացքում արձանագրության հաստատման որից պահանջ չի ներկայացրել ապահովագրական տեսչին, ապվարձատրությունն ստանալու մասին։



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038369

(064)
804
A I / 3744